ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 02 - Լ «30» Դեկտեմբեր 2026 թ.

ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆԻ (ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ) ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ (Ա1-Գ2) ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի 661-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետով, 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների (Ա1-Գ2) պետական չափորոշիչը մշակող մասնագիտական խմբի աշխատակարգը»՝ ըստ հավելվածի 1-ի:

2) «Հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների (Ա1-Գ2) պետական չափորոշիչը մշակող մասնագիտական խմբի անհատական կազմը»՝ ըստ հավելված 2-ի:

2. Լեզվի կոմիտեին՝ ապահովել սույն հրամանի կատարումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ին:

Восстановимая подпись

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Подписано: ANDREASYAN ZHANNA 6402810169 **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2026 թվականի -ի
-Լ հրամանի

ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆԻ (ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ) ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ (Ա1-Գ2) ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կարգը բխում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներից:
2. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայերենի իմացության մակարդակների պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) մշակող մասնագիտական խմբի (այսուհետ՝ Խումբ) ձևավորման, գործառույթների, կազմի և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Խմբի կազմը հաստատվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով:
2. Խումբը ձևավորվում է Լեզվի կոմիտեի նախագահի առաջարկով:
3. Խմբի անդամներն ընտրվում են Լեզվի կոմիտեի փորձագետների բազայից՝ հաշվի առնելով նրանց մանկավարժական, լեզվական չափորոշիչներ մշակելու կամ մշակված չափորոշիչների հիման վրա այլ մասնագիտական աշխատանքներ կատարելու փորձը, լեզուների իմացության եվրոպական շրջանակին ծանոթությունը, անգլերենի իմացությունը: Ընտրության մեջ հավելյալ նշանակություն կարող է տրվել հանրակրթական չափորոշիչների մշակման աշխատանքներում ներգրավված լինելուն:
4. Խմբի աշխատանքները ղեկավարում է Լեզվի կոմիտեի նախագահը (այսուհետ՝ Նախագահ):
5. Խումբը բաղկացած է 6 անդամից:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Նախագահը՝

1) կազմակերպում և համակարգում է Խմբի աշխատանքները,

2) բաշխում է աշխատանքները Խմբի անդամների միջև,

3) նախաձեռնում և անցկացնում է ընթացիկ քննարկումներ Խմբի անդամների հետ,

4) հրավիրում է խորհրդակցություններ մասնագետ-խորհրդատուների հետ,

5) հաստատում է Խմբի անդամների ներկայացրած աշխատանքները,

6) հաստատում է Չափորոշչի մշակման մեթոդաբանությունը,

7) ապահովում է Չափորոշչի նախագծի ներկայացումը ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատման՝ սահմանված ժամկետներում:

8) սահմանում է Խմբի հանդիպումների ժամանակացույցը և ձևաչափը:

2. Խմբի աշխատանքները իրականացվում են.

1) անհատական աշխատանքի ձևով՝ ըստ պայմանագրի և սույն աշխատակարգի,

2) խմբային աշխատանքի ձևով՝ համատեղ քննարկումներ, ժողովներ:

3. Անհատական աշխատանքների շրջանակում Խմբի անդամները՝

1) մշակում են «Հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների (Ա1-Գ2) պետական չափորոշիչը» և դրա մաս կազմող հավելվածները՝ հաստատված մեթոդաբանությամբ և կառուցվածքով,

2) կատարում են համապատասխան ուսումնասիրություն (տեղական և միջազգային փորձի), արդյունքները ներկայացնում քննարկման և հաստատման,

3) ձևակերպում են նախնական ցուցիչներ և հիմնավորումները:

4. Խմբային քննարկումները անցկացվում են ըստ անհրաժեշտության առկա և հեռավար ձևաչափերով, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ առկա ձևաչափով:

5. Մասնագետ-խորհրդատուները հրավիրվում են ՀՀ գիտական հաստատություններից՝ տրամադրելու մասնագիտական խորհրդատվություն:

6. Մասնագետ-խորհրդատուների հետ աշխատանքները կարգավորվում են որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խումբը գործունեությունն իրականացնում է պայմանագրով սահմանված ժամկետներում՝ մինչև Չափորոշիչների մշակման, խմբագրման, լրամշակման ավարտը և նախագիծը ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանին ներկայացնելը:

2. Մշակված Չափորոշիչը մինչև ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանին ներկայացնելը քննարկվում է մասնագիտական հանրության հետ:

3. Չափորոշիչները մինչև ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանին ներկայացնելը ուղարկվում է մասնագիտական կարծիքի:

4. Սույն Կարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2026 թվականի -ի
-Լ հրամանի

ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆԻ (ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ) ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ (Ա1-Գ2) ՊԵՏԱԿԱՆ ՁԱՓՈՐՈՇԻՉԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Սիրանուշ Դվոյան** – ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտեի նախագահ
2. **Անի Հովնանյան** - ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտեի գլխավոր մասնագետ
3. **Անահիտ Հովհաննիսյան** - կրթության փորձագետ
4. **Արմինե Կոստանդյան** - կրթության փորձագետ,
5. **Գոհար Հարությունյան** - լեզվի փորձագետ
6. **Ռուբինա Գասպարյան** - թեստի փորձագետ